4.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Արշալույս գյուղի բնակիչներ Մուկուչ Մամիկոնի Կարապետյանի, Անահիտ Արամայիսի Կարապետյանի, Արտյոմ Մուկուչի Կարապետյանի և Հակոբ Մուկուչի Կարապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 04-021-0049-0012 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Արշալույս, 2-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. փետրվարի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ. Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. hwaugt_khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2025 թվականի N 199-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2024LBVECA, ծածկագիրը և հիմք ընդունելով Մարտին Նշանի Առաքելյանի դիմումը՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Հոկտեմբերյան փողոց 8 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Մարտին Նշանի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի Հոկտեմբերյան փողոց 8 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 0146000 / 04-052-0013- կադաստրային ծածկագրով 0, 1788 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 86,6 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, / 5,4 քմ մակերեսով բնակելի տուն, կառուցված՝ 2002թ., 65,5 քմ մակերեսով խանութ,

կառուցված՝ 2015թ. և 15,7 քմ մակերեսով խանութ, կառուցված՝ 2013թ., ինչպես նաև առկա է 2 ինքնակամ պատուհան/:

2. Ինքնակամ կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 241470 /երկու հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն / ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Մարտին Նշանի Առաքելյանը /Ն.ք՝ 015464910, տրված 09.02.2024թ, 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին՝ 241470 /երկու հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն / ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստան Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի 04-052-0013- կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Ծաղկունք, Հոկտեմբերյան փողոց թիվ 8 բնակելի տուն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025 թվականի փետրվարի 27
Խոյ համայնք գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2025 թվականի N 200-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 50-րդ կետերով և հիմք ընդունելով Մարտին Նշանի Առաքելյանի և Ավագ Նշանի Առաքելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի վարչական տարածքում գտնվող 04-052-0013-0009 կադաստրային ծածկագրի հողամասից կատարել գույքի բաժանում, նրանից առանձնացված՝ 04-052-0013- ծածկագրի՝ 0,08 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Ծաղկունք գյուղ, Հոկտեմբերյան փողոց թիվ 8/1 բնակելի տուն հասցեն, իսկ 04-052-0013- ծածկագրի 0,1788 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Ծաղկունք գյուղ, Հոկտեմբերյան փողոց թիվ 8 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. փետրվարի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2025 թվականի N 201-Ա

ՄՈՒՇԵՂ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՔԵՇԻՇՅԱՆԻ ԵՎ ՇՈՂԻԿ ՄՈՒՇԵՂԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՅՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավար՝ Լ. Յայլոյանս, քննության առնելով թիվ 04/25 վարչական վարույթի գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 1-ին փողոց, 16 տուն հասցեի բնակիչներ Մուշեղ Հարությունի Քեշիշյանին և Շողիկ Մուշեղի Կարապետյանին պատկանող 04-068-0018-0007 ծածկագրի տակ գտնվող հողամասի վրա առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ /ջերմոցի կառուցում/ կատարելու մասին, պարզեցի, որ.

Մուշեղ Հարությունի Քեշիշյանին և Շողիկ Մուշեղի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 04-068-0018-0007 ծածկագրի տակ գտնվող հողամասում, առանց համապատասխան թույլտվության կատարվել է ինքնակամ շինարարություն, ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 31-ին կազմված արձանագրության, տեղազննության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2025 թվականի փետրվարի 3-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 34-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմը՝ այսուհետ անձնակազմ, 2025 թվականի փետրվարի 12-ին հրավիրել և անցկացրել է վարչական վարույթի լսում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, Խոյի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում անցկացվել է լսումը, սակայն Մուշեղ Հարությունի Քեշիշյանը և Շողիկ Մուշեղի Կարապետյանը լսմանը չեն ներկայացել: Մուշեղ Հարությունի Քեշիշյանը և Շողիկ Մուշեղի

Կարապետյանը պատշաճ ծանուցվել են՝ /Հայփոստ ՓԲԸ, ստացականի կոդ՝ L0126432577AM/: Մուշեղ Հարությունի Քեշիշյանը ծանուցումը ստացել է 2025 թվականի փետրվարի 26-ին և խնդրել վարչական վարույթի լսումը անցկացնել 2025 թվականի փետրվարի 27-ին: Վարույթի մասնակից Մուշեղ Հարությունի Քեշիշյանը ներկայացել է վարչական վարույթի լսումներին և հայտնել, որ սեփականության իրավունքով իրեն և Շողիկ Մուշեղի Կարապետյանին պատկանող՝ 04-068-0018-0007 ծածկագրի տակ գտնվող հողամասում, առանց համապատասխան թույլտվության կատարել է ինքնակամ շինարարություն /ջերմոցի կառուցում/, որի համար անկեղծ զղջում է և խնդրել է տրամադրել ժամկետ՝ մինչև 2025 թվականի մարտի 27-ը, փաստաթղթերի ձևակերպման աշխատանքներով զբաղվելու համար:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մուշեղ Հարությունի Քեշիշյանի և Շողիկ Մուշեղի Կարապետյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել:
2. Վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, կամ հրապարակման պահից, կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. փետրվարի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ. Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2025 թվականի N 202-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 1120-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաս տրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 37-րդ հոդվածի 1-ին կետով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափազրման տվյալների մուտքագրման 2023CNPMW9, ծածկագիրը և հիմք ընդունելով Հայրապետ Աբրահամի Հովհաննիսյանի, Սոֆիկ Մելիքի Մարգարյանի, Սիրանուշ Հայրապետի Հովհաննիսյանի, Հայկ Հայրապետի Հովհաննիսյանի, Ալվարդ Հայրապետի Հովհաննիսյանի և Անի Հայրապետի Հովհաննիսյանի դիմումը՝ իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի 2-րդ փողոց 56 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնական շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացիներ Հայրապետ Աբրահամի Հովհաննիսյանին, Սոֆիկ Մելիքի Մարգարյանին, Սիրանուշ Հայրապետի Հովհաննիսյանին, Հայկ Հայրապետի Հովհաննիսյանին, Ալվարդ Հայրապետի Հովհաննիսյանին և Անի

Հայրապետի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի 2-րդ փողոց 56 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 10022015-04-0007 / 04-053-0007-0018 կադաստրային ծածկագրով 0,2 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 378,5 քմ արտաքին մակերեսով ինքնական շինությունները, / 237,3 քմ մակերեսով բնակելի տուն, կառուցված՝ 2002-2017թթ., 76,6 քմ մակերեսով պահեստ, կառուցված՝ 2002թ./, 49,9 քմ մակերեսով խորհանոց, կառուցված՝ 2005թ./, 14,7 քմ մակերեսով պարիսպ, կառուցված՝ 2005թ./, իսկ 1047,3 քմ ներքին մակերեսով ջերմոցը, կառուցված՝ 2019թ. թողնել ինքնական:

2. Ինքնական կառույցների օրինականացման համար սահմանված վճարը կազմում է 538230 /հինգ հարյուր երեսունութ հազար երկու հարյուր երեսուն / ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Հայրապետ Աբրահամի Հովհաննիսյանը /ID՝ 012819439, տրված 25.06.2020թ, 057-ի կողմից/, Սոֆիկ Մելիքի Մարգարյանը /անձնագիր՝ AS0345590, տրված 22.08.2018թ, 057-ի կողմից/, Սիրանուշ Հայրապետի Հովհաննիսյանը /ID՝ 006660674, տրված 13.07.2015թ, 057-ի կողմից/, Հայկ Հայրապետի Հովհաննիսյանը /ID՝ 010527042, տրված 28.08.2019թ, 057-ի կողմից/, Ավարդ Հայրապետի Հովհաննիսյանը /ID՝ 008499956, տրված 21.07.2016թ, 057-ի կողմից/ և Անի Հայրապետի Հովհաննիսյանը / ID՝ 011241205, տրված 09.09.2021թ, 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին՝ 538230 /հինգ հարյուր երեսունութ հազար երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 4-ի «Ինքնական կառուցված շինությունն օրինականացնելու մասին» թիվ 1120-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

2024 թվականի փետրվարի 28
Խոյ համայնք գ.Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2025 թվականի N 203-Ա

**ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,0005 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Միշա Հակոբի Մարգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Արմավիրի մարզի, Խոյ համայնքի Շահումյան գյուղի Կոմիտասի 3-րդ փողոց, թիվ 35 հողամաս հասցեում /04-077-0339-0015 ծածկագիր/ գտնվող Միշա Հակոբի Մարգարյանին /հիմք՝ Համաձայն Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Էջմիածնի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1988 թվականի հոկտեմբերի 3-ի նիստի թիվ 24 արձանագրություն/ պատկանող 0,06 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0,0005 հա հողամասի նկատմամբ քաղաքացի Միշա Հակոբի Մարգարյանին սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. փետրվարի 28
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2025 թվականի N 204-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 50-րդ կետերով և հիմք ընդունելով Սարգիս Արտուրի Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-011-0020-0016 կադաստրային ծածկագրի հողամասից կատարել գույքի բաժանում, նրանից առանձնացված՝ 04-011-0020- ծածկագրի՝ 0,0743 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Այգեշատ գյուղ, Գործարանային փողոց թիվ 16/1 հասցեն, իսկ 04-011-0020- ծածկագրի 0,0757 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Այգեշատ գյուղ, Գործարանային փողոց թիվ 16 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. hawgt khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2025 թվականի N 205-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սերյոժա Լիտվինի Կարապետյանի դիմումը և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղում գտնվող 04-068-0024-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի՝ 0,0818 հա հողամասի վրա 247,65 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինության կառուցման աշխատանքները իրականացվել է Սերյոժա Լիտվինի Կարապետյանի /ծնված՝ 17.06.1959թ./, անձնագիր AV0651986, տրված 23.02.2023թ., 057-ի կողմից / կողմից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սերյոժա Լիտվինի Կարապետյանին ուղղակի վաճառքով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 9-րդ փողոց թիվ 3 բնակելի տուն, 04-068-0024-0005 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,0818 հա հողամասը և 247,65 քմ արտաքին մակերեսով շինությունը /հիմք/ օտարել, հողամասի համար՝ **647860** /վեց հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր վաթսուն / ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի ֆոնդային եկամուտների **900325174135** հաշվեհամարին, իսկ շինության համար՝ **763760** /յոթ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին: 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

2. Սերյոժա Լիտվինի Կարապետյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. մարտի 3
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



L. ՅԱՅԼՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2025 թվականի N 206-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Ռաֆիկ Անդրանիկի Կարապետյանի դիմումը և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում գտնվող 04-055-0025-0041 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի՝ 0,0325 հա հողամասի վրա 85,9 քմ արտաքին մակերեսով արտադրական շինությունների կառուցման աշխատանքները իրականացվել է Ռաֆիկ Անդրանիկի Կարապետյանի /ծնված՝ 15.08.1987թ., անձնագիր՝ AX0536942, տրված 07.11.2024թ., 057-ի կողմից/ կողմից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ռաֆիկ Անդրանիկի Կարապետյանին ուղղակի վաճառքով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի Մ. Մաշտոցի փողոց 5/2 շինություն հասցեում, 04-055-0025-0041 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,0325 հա հողամասը և 85,9 քմ արտաքին մակերեսով շինությունները /հիմք/ օտարել, հողամասի համար՝ **561172** /հինգ հարյուր վաթսունմեկ հազար հարյուր յոթանասուներկու / ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի ֆոնդային եկամուտների **900325173137** հաշվեհամարին, իսկ շինության համար՝ **155780** /մեկ հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր ութսուն / ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին: 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

2. Ռաֆիկ Անդրանիկի Կարապետյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. մարտի 3
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
+374(60-888-999), էլ. hawgtv khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2025 թվականի N 207-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀՈԿՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՏՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Դեկլարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 14 մարտի 1997 թվականի N 51 և 9 հունիսի 1997 թվականի N 173 որոշման դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-060-0032-0003 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողերի՝ 0,1775 հա հողամասի սահմանները համաձայն <<Ավագ Ավագյան Գագիկի>> Ա/Ձ-ի կողմից կազմված հատակագծի և հողամասի վրա առկա 475,7 քմ ներքին մակերեսով արտադրական նշանակության շինությունները՝ /307 քմ կիսակառույց, 29,1 քմ կիսաքանդ, 86,9 քմ կիսակառույց, 16,6 քմ պահեստ և 36,1 քմ պարիսպ/ ճանաչել օրինական:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման որոշման գրանցման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի 04-060-0032-0003 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Խոյ համայնք, գյուղ Հովտամեջ, Հ. Թումանյան փողոց 41 շինություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ՝

Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

Խոյ համայնք, գ.Գեղակերտ
2025 թվականի մարտի 3





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2025 թվականի N 208-Ա

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի բնակիչ Վարդան Դերենի Պոչիկյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի 7-րդ փողոց թիվ 18 բնակելի տուն /04-051-0025-0004 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 10.01.2025թ. սեղանամատյան 156 և 158 / 0.09 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի 7-րդ փողոց թիվ 18 բնակելի տուն /04-051-0025-0004 կադաստրային ծածկագիր /գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Վարդան Դերենի Պոչիկյանի /ծնված 25.07.1968թ./, գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.09 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և

բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տուն՝ 245,3 ք/մ մակերեսով կառուցված 1961թ., թոնրատուն՝ 12,7 ք/մ մակերեսով կառուցված 1961թ.:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Վարդան Դերենի Պոչիկյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի 04-051-0025-0004 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Ծաղկալանջ, 7-րդ փողոց թիվ 18 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 4
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2025 թվականի N 209-Ա

ՀԱՍՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով Արամ Վոլոդյայի Ներսիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մոնթեական գյուղի վարչական տարածքում գտնվող 04-078-0007-0003- կադաստրային ծածկագրով տարածքին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Մոնթեական գյուղ, 1-ին փողոց, 44 շենք, թիվ 11 բնակարան հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. մարտի 4
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. hwaugb khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2025 թվականի N 210-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն N 912-Ն որոշումները և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին և նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն «ՍԵՎԱՆ ՄԱՆՎԵԼԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ >> ԱՁ-ի կոմից կազմված հատակագծի և չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2024MUEYRP.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 04-077-0012-կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական՝ 0,0488 հա հողամասի վրա ինքնական կառուցված 278,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նշանակության շինությունները ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղի սեփականությունը:

2. Քանի որ 278,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով / 158,5 քմ մակերեսով անասնաշենք, կառուցված՝ 1998թ., 112,5 քմ մակերեսով պահեստ, կառուցված 1998թ. և 7,6 քմ մակերեսով պարիսպ, կառուցված՝ 1998թ./ հասարակական նշանակության

շինությունների կառուցումն իրականացվել է Մարգարիտա Նիկոլայի Գրիգորյանի /ծնված՝ 10.01.1950թ., անձնագիր՝ AV0636304, տրված 10.02.2023թ., 057-ի կողմից/ կողմից առաջարկել նրան գնման նախապատվության իրավունքով ձեռքբերելու ինքնակամ կառուցված շինությունները և այդ շինություններով զբաղեցված 0,0488 հա հողամասը: Որոշման ընդունման օրվանից, օրինականացման մեկ քառակուսի մետրի համար 10881 ՀՀ դրամ սահմանված վճարը՝ **3031450** /երեք միլիոն երեսունմեկ հազար չորս հարյուր հիսուն / ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին, իսկ Արմավիրի մարզի Խոյ համայնքի՝ Շահումյան գյուղի ֆոնդային եկամուտների **900325186139** հաշվեհամարին պետք է վճարի **595850** /հինգ հարյուր ինսունհինգ հազար ութ հարյուր հիսուն / ՀՀ դրամ, մեկ քառակուսի մետր հողի համար՝ **1221** ՀՀ դրամ: 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման որոշման գրանցման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

4.Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղի 04-077-0012- կադաստրային ծածկագրով հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գյուղ Շահումյան Ի. Հարությունյան փողոց, թիվ 30/2 հողամաս հասցե:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. մարտի 4
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2025 թվականի N 211-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N143-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Ալբերտ Զոհրաբյանի կողմից 2025 թվականի մարտի 3-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Ալբերտ Զոհրաբյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2025 թվականի I-ին եռամսյակի համար:

2. Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 04
Խոյ համայնք, գ.Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2025 թվականի N 212-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղում գործող <<ԽԱՆ 8>> ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արթուր Հովսեփյանի կողմից 2025 թվականի մարտի 3-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղում գործող <<ԽԱՆ 8>> ՍՊԸ-ին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2025 թվականի I-ին եռամսյակի համար:
2. Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 04
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2025 թվականի N 213-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԴ ՏԵՂԱԴԻՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղում գործող «ԽԱՆ 8» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արթուր Հովսեփյանի կողմից 2025 թվականի մարտի 3-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղում գործող «ԽԱՆ 8» ՍՊԸ-ին տալ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:
2. Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 04
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2025 թվականի N 214-Ա

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավար Լյուդվիկ Յայլոյանս, ուսումնասիրելով **Վարդան Հրաչիկի Հակոբյանի, Գոհար Հրաչիկի Հակոբյանի, Վարդանուշ Մացակի Հակոբյանի, Հրաչիկ Երջանիկի Հակոբյանի** նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը, *պարզեցի՝*

Վարդան Հրաչիկի Հակոբյանը, Գոհար Հրաչիկի Հակոբյանը, Վարդանուշ Մացակի Հակոբյանը, Հրաչիկ Երջանիկի Հակոբյանը /ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գյուղ Ծիածան, 1-ին փողոց, 28 տուն/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտներ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից և Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 2025 թվականի հունվարի 17-ին տրված «Վեկտոր Պյուս» և E-community ծրագրերից ստացված տեղեկանքների հիման վրա Խոյի համայնքապետարանը 2025 թվականի փետրվարի 5-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցել է վարչական վարույթ:

Վարդան Հրաչիկի Հակոբյանին, Գոհար Հրաչիկի Հակոբյանին, Վարդանուշ Մացակի Հակոբյանին, Հրաչիկ Երջանիկի Հակոբյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին՝ ծանուցումն ուղարկվել է /հիմք՝ 2025 թվականի փետրվարի 5-ի թիվ 5 ծանուցումը/: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ **Վարդան Հրաչիկի Հակոբյանին, Գոհար Հրաչիկի Հակոբյանին, Վարդանուշ Մացակի Հակոբյանին, Հրաչիկ Երջանիկի Հակոբյանին**՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցելուց հետո վերջիններիս կողմից չի ներկայացվել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համակարգ հանդիսացող «Վեկտոր Պլուս» և E-community ծրագրերից ձեռք բերված տվյալները՝ **Վարդան Հրաչիկի Հակոբյանը, Գոհար Հրաչիկի Հակոբյանը, Վարդանուշ Մացակի Հակոբյանը, Հրաչիկ Երջանիկի Հակոբյանը** չեն կատարել ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գտնվող, իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի հարկային պարտավորությունները, որի հետևանքով 2025 թվականի հունվարի 17-ի դրությամբ գոյացել է՝ **ընդամենը 356259 /երեք հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ հողի հարկի հարկային պարտավորություն:**

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գտնվող 04-053-0020-0005 /0.14 հա/ ծածկագրով բնակելի կառուցապատման հողի, 04-053-0637-0007 /0.95 հա/ ծածկագրով հողակտորի ընդհանուր պարտքը կազմում է՝ **356259 /երեք հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 273428 /երկու հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր քսանութ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 120855 /հարյուր քսան հազար ութ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ, տույժ՝ 152573 /հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականներն առյալ՝ 82831 /ութսուներկու հազար ութ հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 62209 /վաթսուներկու հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, տույժ՝ 20622 /քսան հազար վեց հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ:**

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տեղական հարկի տեսակներն են՝ գույքահարկը, հողի հարկը, ...:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2021) 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե հողի հարկով հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա հողի հարկի՝ սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հարկման օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա անշարժ գույքի հարկի գծով օրենսգրքի «անշարժ գույքի հարկը» բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն, բացառությամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող այն հողամասերի, որոնցում առկա են տարբեր հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի միավորներ՝ շենքեր և (կամ) շինություններ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.4-րդ հոդվածը սահմանում է՝ տեղական հարկատեսակների և դրույքաչափերի սահմանումը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող **Եկամտների հաշվառումը**, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև

հարկային վարչարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություններն են:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում տեղական հարկերի, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունն օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմնին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը...:

Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

